Առաջարկություն
«Հասարակական կազմակերպությունների մասին»
ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ
(Նախագիծ՝ 02.04.2015)

Կազմակերպության գործունեության
կասեցումը և լուծարումը

Կոնկրետ հասարակական կազմակերպությունների դեպքում, Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ ԵԽ հանձնարարականը սահմանում է, որ միավորումները կարող են լուծարվել սնանկության, երկարատև անգործության կամ լուրջ իրավախախտում կատարելու դեպքում: (Միավորումների ազատության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույցի /2014 դեկտեմբեր/, կետ 245):

1. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի (հետայսու՝ Օրենքի նախագիծ) կարևորագույն դրույթներից է հանդիսանում հասարակական կազմակերպությունների գործունեության հարկադիր դադարեցման վերաբերյալ դրույթները: Օրենքի նախագիծը սահմանում է հարկադիր՝ ժամանակավոր և վերջնական դադարեցման միջոց:

Միավորումների ազատության կասեցումը հանդիսանում է միավորումների ազատության սահմանափակման միջոց, որը կարող է սահմանվել և կիրառվել պետության կողմից: Որպես միավորումների ազատության սահմանափակման միջոց այն անհրաժեշտ է կիրառել միայն դատարանի որոշմամբ: Օրենքի նախագծով սահմանված չէ հասարակական կազմակերպության գործունեության կասեցման կարգը: Նման կարգ սահմանված է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ գործող օրենքի 27-րդ հոդվածով:

2. Հասարակական կազմակերպության գործունեության հարկադիր վերջնական դադարեցումը կարող է իրականացվել դատարանի որոշմամբ՝ հասարակական կազմակերպության հարկադիր լուծարման միջոցով:

Օրենքի նախագծի 2-րդ մասով սահմանված են հասարակական կազմակերպության հարկադիր լուծարման պահանջի հիմքերը:

Լիազոր մարմինը կարող է հարկադիր լուծարման պահանջով դիմել դատարան, եթե.

1) Կազմակերպությունը թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում.

2) Կազմակերպություն հիմնադրող անձը կամ լիազորված անձը Կազմակերպությունը հիմնադրելիս թույլ են տվել օրենքի էական խախտում կամ կեղծիք:

Կազմակերպության կողմից թույլ տրված կոպիտ խախտում է համարվում.

1) Կազմակերպության գործունեության կասեցումից հետո օրենքով արգելված կամ առանց թույլտվության (լիցենզիայի) գործունեություն իրականացնելը.

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ խախտումը չվերացնելը.

3) սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ ազգային կամ ռասայական կամ կրոնական ատելություն բորբոքելու կամ բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով Կազմակերպության իրականացրած գործունեությունը.

Այսպիսով, սահմանված է, թե որոնք են հանդիսանում օրենքի կոպիտ խախտումները, սակայն նշված չէ, թե որն է հանդիսանում օրենքի էական խախտում: Օրենքի իրավական որոշակիությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով կարևոր է տալ նաև «օրենքի էական խախտում» արտահայտության սահմանումը:

3. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ

հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանվում է, որ կոպիտ խախտում է հանդիսանում սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ ազգային, կամ ռասայական, կամ կրոնական ատելություն բորբոքելու կամ բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով Կազմակերպության իրականացրած գործունեությունը: Ազգային կամ ռասայական կամ կրոնական ատելություն բորբոքելը հանդիսանում է խտրականության հրահրում: ՀՀ Սահամանդրության 14.1 հոդվածով սահմանում է որևէ հիմքով խտրականության արգելքը: Ուստի անհրաժեշտ է սահմանել ցանկացած, ներառյալ ազգային, ռասայական, կրոնական հիմքով ատելություն բորբոքելուն ուղղված գործողությունների արգելքը:

Միևնույն ժամանակ ելնելով հասարակության մեջ հանդուրժողականության և հավասարության մթնոլորտի տարածման անհրաժեշտությունից, առաջարկվում է խտրականություն արգելող դրույթը կամ սահմանել որպես սկզբունք, կամ պահպանել նույն դրույթը որպես Օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մաս, ինչպես որ նախատեսված է եղել նախագծի նախորդ խմբագրություններով:

4. Պարզ չէ նաև առանձին «սահմանադրական կարգը բռնի տապալելու» արտահայտության օգտագործման նպատակահարմարությունը: Միավորումների ազատությունը իրացնելիս միավորումները ազատ են քարոզել (promote) փոփոխություններ օրենքի և սահմանադրական կարգի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ նրանք դա անում են կիրառելով խաղաղ միջոցներ: (Միավորումների ազատության վերաբերյալ ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի համատեղ ուղեցույցի /2014 դեկտեմբեր/, կետ 89): Նույն կետով արդեն իսկ արգելվում է բռնություն քարոզելը: Այսինքն՝ բռնություն քարոզելը պետք է արգելված լինի անկախ այդ բռության և քարոզի նպատակից: Ուստի առաջարկվում է «սահմանադրական կարգը բռնի տապալելու» արտահայտությունը հանել:

5. Պարզ չէ 169.26 «Հասարակական կազմակերպության կողմից կանոնադրության նպատակներին անհամապատասխան գործունեության իրականացում» (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված) վարչական իրավախախտում սահմանելու,

տուգանքներ նշանակելու նպատակահարմարությունը և պետության կողմից նման միջամտության անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ

- հասարակական կազմակերպության կողմից կանոնադրական նպատակներին անհամապատասխան գործունեություն իրականացնելու արդյունքում վրա հասած բացասական հետևանքների ռիսկը կրում է հասարակական կազմակերպությունը,
- յուրաքանչյուր դեպքում կարող են խնդիրներ առաջանալ կանոնադրական նպատակների մեկնաբանման տեսանկյունից,
- հասարակական կազմակերպությունը ցանկացած դեպքում ազատ է լրացում կատարել կամ փոփոխել իր կանոնադրական նպատակներ,
- պարզ չէ թե ինչ մեխանիզմներով են հայտնաբերվելու կանոնադրական նպատակներին անհամապատասխան գործունեություն իրականացնող կազմակերպությունները, արդյո՞ք իրականացվելու է մշտական մոնիթորինգ բոլոր գրանցված հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ անհրաժեշտ է կանոնադրական նպատակներին համատասխան գործունեության իրականացման պահանջի ապահովման հանդեպ հսկողության լիազորությունը, անհրաժեշտության դեպքում, վերապահել կազմակերպության Ընդհանուր Ժողովին կամ Խորհրդին:

Առաջարկություններ.

1. Օրենքի մեջ պարզաբանել, թե որն է հանդիսանում «օրենքի էական խախտում»:

2. Սահմանել հասարակական կազմակերպության գործունեության կասեցման կարգը:

3. Օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանել որոշակի ժամկետ (5-օրյա) կազմակերպության կողմից խախտումը վերացնելու համար:

4. Օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանել 31-րդ հոդվածի 1-ին մասով, որպես կասեցման վերաբերյալ պահանջի հիմք:

Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31. Կազմակերպության հարկադիր լուծարման և գործունեության կասեցման պահանջի հիմքերը

1. Լիազոր մարմինը կարող է դիմել դատարան Կազմակերպության գործունեությունը կասեցնելու պահանջով հետևյալ դեպքերում.

1) Կազմակերպությունը իրականացրել է օրենքով արգելված կամ առանց թույլտվության (լիցենզիայի) գործունեություն կամ

2) Լիազորված Մարմնի կողմից սահմանված ժամկետում չի վերացրել խախտումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո:

2. Դատարանի կողմից է սահմանվում կազմակերպության գործունեության կասեցման սահմանները:

3. Կազմակերպության գործունեության կասեցումը վերացվում դատարանի կողմից հասարակական կազմակերպության պահանջի հիման վրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո:

4. Լիազոր մարմինը կարող է Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջով դիմել դատարան, եթե՝

1) Կազմակերպությունը թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում.

2) Կազմակերպություն հիմնադրող անձը կամ լիազորված անձը Կազմակերպությունը հիմնադրելիս թույլ են տվել օրենքի էական խախտում կամ կեղծիք:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով կոպիտ խախտում է համարվում՝

1) Կազմակերպության գործունեության կասեցումից հետո օրենքով արգելված կամ առանց թույլտվության (լիցենզիայի) գործունեություն իրականացնելը

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ Լիազորված մարմնի կողմից սահմանված ժամկետում խախտումը չվերացնելը.

6. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով օրենքի էական խախտում է համարվում.

---------- (սահմանումը)»

5. Օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 3-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, որպես վարչական իրավախախտում. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը լրացնել 169.27 հոդվածով, հետևյալ բովանդակությամբ.

«169.27. Կամ ազգային, կամ ռասայական, կամ կրոնական, կամ այլ հիմքով ատելություն բորբոքելու, կամ բռնություն, կամ պատերազմ քարոզելու նպատակով Կազմակերպության կողմից գործունեություն իրականացնելը.

առաջացնում է տուգանքի նշանակում հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով։

Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 3-15 օրվա ընթացքում (կախված իրավախախտման բնույթից), հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության նախազգուշացման պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։»

6. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 9-րդ կետով, հետևյալ բովանակությամբ.

«9) *անխտրականություն»*

7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածից հանել *«Հոդված 169.26. Հասարակական կազմակերպության կողմից կանոնադրության նպատակներին անհամապատասխան գործունեության իրականացում»* -հոդվածը իր բովանդակությամբ: